Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-142-09.11.2012-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 8-րդ մասից և 37-րդ հոդվածի 13-րդ մասից հանել << (բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի)>> բառերը:

Հոդված 2. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի `

1. 3-րդ՝ <<Առողջապահության բնագավառ >> բաժնի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. 9-րդ՝<<Կրթության բնագավառ>> բաժնի՝

1) 6-րդ կետից հանել << (բացառությամբ բժշկական միջին մասնագիտական ծրագրերի)>> բառերը.

2) 7-րդ և 8-րդ կետերից հանել <<(բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի)>> բառերը:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Կրթական ծրագրերի իրականացման համար մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրված լիցենզիաները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6-ամսյա ժամկետում, ենթակա են վերաձևակերպման՝ սույն օրենքի պահանջներին համապատասխանեցման նպատակով: Սույն մասում նշված ժամկետում վերաձևակերպման չներկայացված լիցենզիաները համարվում են ուժը կորցրած, իսկ տվյալ կազմակերպությունները կարող են լիցենզավորվել լիցենզավորման կարգերով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նշված ժամկետում լիցենզիաների վերաձևակերպման դեպքում «Պետական տուրքի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ արված դիտողությունների և առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
1. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ.Բաբաուխանյան	ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ. Օրենքի նախագիծը լրացնել նոր 1.1 և 1.2 հոդվածներով. Հոդված 1.1 Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ կետով՝ <<6.Համապատասխան բնագավառում պետական քաղաքականության	Ընդունելի չեն:	*Օրենսդրական նախաձեռնությունը պայմանավորված է կրթության ոլորտի ներկա բարեփոխումներով,* բխում է կրթական ոլորտում միասնական պետական քաղաքականություն, կրթության բնագավառում պետական քաղաքականության միասնական չափանիշներ ունենալու, ուսումնական հաստատությունների համար լիցենզավորման պայմանների ու պահանջների հավասար դաշտ ապահովելու անհրաժեշտությունից: <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում (այսուհետ՝ օրենք) առաջարկվող լրացումների անհրաժեշտությունը չկա. Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված լիցենզավորման նպատակների վերլուծությունից պարզ է դառնում, որ այն պետական հսկողության ձև է, համապատասխան բնագավառում պետական քաղաքականության իրականացման եղանակ:

	իրականացումը:>>: Հոդված 1.2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել նոր՝ 3-րդ մասով. <<Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք չունեն կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, կրոնական կազմակերպությունները կամ նրանց մասնակցությամբ հիմնադրված այլ իրավաբանական անձերը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:>> :		Գործունեության առանձին տեսակների լիցենզավորումը գործարարական գործունեության կառավարման և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու եղանակ է, տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ պետական կառավարման ֆունկցիա: ՀՀ-ում լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, օրենքով, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության պահանջը տարածվում է բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ: Օրենքի 7-րդ հոդվածում առաջարկվող լրացումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 7-րդ, 8.1. հոդվածներից: